ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ԼՈՒԿԱՇԻՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆՈՒ

<< 27>> նոյեմբերի 2014թ, N 07 ՆԻՍՏԻ

Թիվ 24-Ն

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի չորրորդ մասով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուկաշինի գյուղական համայնքի ավագանու 2014 թվականի նոյեմբերի 27- ի թիվ 07 արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ՝

	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Անդրանիկ Թովմասյան			
Սուրեն Մուրադյան			
Նորիկ Մեսրոպյան			
Արթուր Մկրտումյան			
Արամայիս Հովհաննիսյան			
Գագիկ Մարգարյան			
Սուրեն Հովսեփյան			

ԼՈՒԿԱՇԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ՄԿՐՏՉՅԱՆ

Կ. Տ.

2014 թվականի նոյեմբերի << 27 >>

գյուղ Լուկաշին

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒԿԱՇԻՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2014 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ << 27 >>-Ի
N 07 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ԹԻՎ 24-Ն ՈՐՈՇՄԱՆ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒԿԱՇԻՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՆՅՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ

23.ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 27-Ի ԹԻՎ 07 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

/ԶԵԿՈՒՅՈՂ՝ Կ. ՄԿՐՏՉՅԱՆ – ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ/

24 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒԿԱՇԻՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի ԹԻՎ 23-Ն ՈՐՈՇՄԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՅԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿՈՒՅՈՂ՝ Կ. ՄԿՐՏՉՅԱՆ – ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ/

25. . ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒԿԱՇԻՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿՈՒՅՈՂ՝ Կ. ՄԿՐՏՉՅԱՆ – ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ԼՈՒԿԱՇԻՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ

<< 27 >նոյեմբեր ի 2014թ, N 07 ՆԻՍՏԻ
Թիվ 24- Ն

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒԿԱՇԻՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի ԹԻՎ 23-Ն ՈՐՈՇՄԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՅԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով և հիմք ընդունելով Լուկաշինի գյուղական համայնքի ղեկավարի առաջարկությունը

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուկաշինի գյուղական համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 21-ի <<Բյուջեի հաստատման մասին>> N 23-Ն որոշման մեջ կատարել փոփոխություն՝ 2014թ-ի բյուջեի եկամուտների և ծախսերի նկատմամբ:

ԵԿԱՄՏԱՅԻՆ ՄԱՍ

1. Հայաստանի հանրապետության Արմավիրի մարզի լուկաշինի գյուղական համայնքի 2014 թվականի բյուջեի հողի հարկի մասով պակասեցնել 2 500 000 /երկու միլիոն հինգ հարյուր հազար/:

ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍ

Լուկաշին գյուղական համայնքի 2014 թվականի բյուջեի վարչական մասի

1. 01/1/1 հոդված 4212-ից պակասեցնել 500 000 /հինգ հարյուր հազար/ դրամ:
2. 01 /1/ 1 հոդված 4241-ից պակասցնել 250 000 /երկու հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ:
3. 05/1/1 հոդված 4213-ից պակասեցնել 750 000 /յոթ հարյուր հիսուն հազար/ դրամ:
4. 06/3/1 հոդված 5113-ից պակասեցնել 1000 000 /մեկ միլիոն / դրամ:
5. 01/1/1 հոդված 4264-ից պակասեցնել 1000 000 /մեկ միլիոն / դրամ, ավելացնել բաժին 04/5/1 հոդված 4251-ին 1000 000 /մեկ միլիոն / դրամ:

6. 01/6/1 հոդված 4241-ից պակասեցնել 640 000 /վեց հարյուր քառասուն հազար/ դրամ, ավելացնել բաժին 10/7/1 հոդված 4729-ին 640 000 /վեց հարյուր քառասուն հազար/ դրամ:

7. 01/6/1 հոդված 4819-ից պակասեցնել 70 000 /յոթանասուն հազար/ դրամ, ավելացնել բաժին 10/7/1 հոդված 4729-ին 70 000 /յոթանասուն հազար/ դրամ:

8. 01/6/1 հոդված 4269-ից պակասեցնել 293 400 /երկու հարյուր ինիսուներեք հազար չորս հարյուր/ դրամ, ավելացնել 10/7/1 հոդված 4729-ին 293 400 /երկու հարյուր ինիսուներեք հազար չորս հարյուր/ դրամ:

9. 01/6/1 հոդված 4213-ից պակասեցնել 50 000 /հիսուն հազար/ դրամ, ավելացնել 01/1/1 հոդված 4111-ին 50 000 /հիսուն հազար/ դրամ:

10. 10/4/1 հոդված 4729-ից պակասեցնել 200 000 /երկու հարյուր հազար/ դրամ, ավելացնել 10/7/1 հոդված 4729-ին 200 000 /երկու հարյուր հազար/ դրամ:

11. 06/3/1 հոդված 4111-ից պակասեցնել 350 000 /երեք հարյուր հիսուն հազար/ դրամ, ավելացնել 10/7/1 հոդված 4212-ին 350 000 /երեք հարյուր հիսուն հազար/ դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ՝

	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Անդրանիկ Թովմասյան			
Սուրեն Մուրադյան			
Նորիկ Մեսրոպյան			
Արթուր Մկրտումյան			
Արամայիս Հովհաննիսյան			
Գագիկ Մարգարյան			
Սուրեն Հովսեփյան			

ԼՈՒԿԱՇԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ՄԿՐՏՉՅԱՆ

Կ. Տ.

2014թ. նոյեմբերի << 27>>
գյուղ Լուկաշին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ԼՈՒԿԱՇԻՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ

<< 27>> նոյեմբերի 2014թ, N 07 ՆԻՍՏԻ
թիվ 25-Ն

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒԿԱՇԻՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 18-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 9-րդ և 10-րդ հոդվածներով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի երկրորդ մասով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիրի Լուկաշինի գյուղական համայնքի վարչական տարածքում 2015 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ավագանու անդամներ՝

Անդրանիկ Թովմասյան

Սուրեն Մուրադյան

Նորիկ Մեսրոպյան

Արթուր Մկրտումյան

Արամայիս Հովհաննիսյան

Գագիկ Մարգարյան

Սուրեն Հովսեփյան

ԼՈՒԿԱՇԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ՝

Կ. ՄԿՐՏՉՅԱՆ

Կ. Տ.

2014 թվականի նոյեմբերի 27,

գ.Լուկաշին

ՀԱԿԵԼԿԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՌԿԱՇԻՆԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2014 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 27-Ի
թիվ 7-րդ արտահերթ նիստի N 25 -Ն
ՈՐՈՇՄԱՆ

ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՌԿԱՇԻՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

հիմնական օբյեկտների համար՝

1/ մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 2 000 /երկու հազար/ դրամ.

*2/*սույն կետի «1/» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 3 000 /երեք հազար/ դրամ.

բ. 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 5 000 /հինգ հազար/ դրամ.

գ. 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 7 000 /յոթ հազար/ դրամ.

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

*3/*մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 500 /հինգ հարյուր/ դրամ.

4/ 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1 000 /մեկ հազար/ դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1/ չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝

ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ 1 000 / մեկ հազար/ դրամ.

2/ բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «1/» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով.

3/ նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 1 000 /մեկ հազար/ դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1/ ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝5 000 /հինգ հազար/ դրամ.

2/ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 5 000 /հինգ հազար/ դրամ:

5. Համայնքի տարածքում՝

1/ բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝ 350 /երեք հարյուր հիսուն/ դրամ.

2/ հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 150 000 /մեկ հարյուր հիսուն հազար/ դրամ:

6. Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներով պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 50 000 /հիսուն հազար/ դրամ:

7. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24^{00}-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

1/ առևտրի օբյեկտների համար՝ 25 000 /քսանհինգ հազար/ դրամ.

2/ հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50 000 /հիսուն հազար/ դրամ.

3/ բաղնիքների (սաունաների) համար՝ 200 000 /երկու հարյուր հազար/ դրամ.

4/ խաղատների կազմակերպման համար՝ 500 000 /հինգ հարյուր հազար/ դրամ.

5/ շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250 000 /երկու հարյուր հիսուն հազար/ դրամ.

6/ վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100 000 /մեկ հարյուր հազար/ դրամ:

8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

1/ ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1 000 /մեկ հազար/ դրամ.

2/ թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավել ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2 500 /երկու հազար հինգ հարյուր/ դրամ.

3/ այլ արտաքին գովազդի համար՝ 500 /հինգ հարյուր/ դրամ.

4/ դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 /յոթ հարյուր/ դրամ:

9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 500 /հինգ հարյուր/ դրամ:

10. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 500 /հինգ հարյուր/ դրամ:

11. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 1 000 /մեկ հազար/ դրամ:

12. Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 1 000 /մեկ հազար/ դրամ:

13. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար սահմանել 5 000 /հինգ հազար/ դրամ: